

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

Հանդես հարցաքննութեան սանից Միխրա-
րեան ուխտին :

Ի խրախոյս քաջալերութեան ուսումնա-
սէր իւրոյ մանկտույն՝ Ուխտս Միխրարայ ,
որպէս զմանկտույ Վարժարանացն՝ սովոր
է և զիւրոցն յառաջադիմութեան հանդէս
առնել ամի ամի ժողովելով յունկնդրու-
թիւն հարցաքննութեան նոցա , և պսակե-
լով հանդիսիւ զվաստակս իւրաքանչիւր :
Զոր և 'ի վերջ կոյս անցելոյ ամին արարեալ՝
զառաջնոյ ամի աշակերտութեան կրտսերա-
գունի դասուն , 'ի վերջ հանդիսին վարժա-
պետ նոցա վաստակաւոր արար զառաջի-
կայս բանախօսութիւն զոճոյ և զօրինաց
դաստիարակութեան հասարակաբար . զոր
և ազգայնոցն մերոց բանասիրաց ոչ ինչ
անօգուտ համարիմք ընծայել յընթերցումն :

Ի լուծմն փոքու հանդիսիս պատուե-
ցելոյ 'ի փառաւորեալ ակմբէդ , ո՛ր Մ-
տուածապատիւ Հայրապետ և Հարբ
մեծարեալք , յետ անտիական հասակին
Թոթովաբանութեցն գողանալոյ զնե-
րող և զերկայնամիտ ունկնդրութիւն
իմաստազարդ կաճառոյդ , հիացեալ
կամ զայդ առաջին նուագ ելանելոյ ի-
մոյ յայս ատեան՝ ընդ այնքանի բերկրու-
թիւն և ընդ հրճուանս , որ յաչս ձեր
և 'ի շրթունս և 'ի շարժուածս իւրա-
քանչիւր բոցափայլեալ , և 'ի լուծեան
անդ որպէս մեծագոյ բարբառով քաջա-
լերս և խրախոյս դեռավարժիցն ազգէր
'ի սիրտ : Երեւցի ինձ ապա 'ի հիաց-
մանս իմում դառնալ աստ առ մանկտիս
և մատնանիչ առնել նոցա՝ եթէ Մհա-
ւասիկ ձեզ , մանկունք , ահաւասիկ
ձեզ հաւաստիք ստուգութեան բանիցս ,
որովք երբեմն խրախուսէի զդեռա-
կիրթ հասակդ 'ի դժուարին և 'ի տար-
ժանելի վաստակսդ . տեսէք զհօր խան-
դաղատանս . տեսէք զիւրդ երագաքայլ
'ի հանդէս մրցարանին ձերոյ փութայ .
տեսէք զհայեցուածս զոր ձեզն նուիրէ .
հայեցարուք իբր զխոնջ և զգիւրավա-
տակ զանդամսդ յիւր հայրենի գիրկսն
հանգուցանէ . որ զի ձեօք և 'ի ձեզ

ակն ունի երկայնակեաց յաւերժանալ
աւուրբք բարութեան : Հապա ջանք 'ի
ջանս և վաստակ 'ի վաստակս ձեր յա-
ւելցին . զի քիրտն ձեր և ապաժոյժ ոչ
անտես ծածկին ընդ խոնարհ յարկաւդ :
Ո՛հ , յօրէ աստի Թուխմ տեսանել , ո՛
սիրեցեալ մանկտի , զի Թե 'ի Թես
և ծիծաղ բոսորատիպ զայտիւքդ կար-
մրացելովք՝ սրակաձե զհարբդ բոլո-
րեալ , իբրու յասպարէզ մանկական
խաղուց դիմէք դարձ առնելով միւս-
անգամ 'ի վաստակս ձեր :

Եւ կարի իսկ քաջ , ո՛վ Հարբ առա-
քինիք , և կարի յոյժ 'ի դէպ իմաս-
տութեանդ ձերում դարձուցանել 'ի
դոսա զքաղցր հայեցուածս ձեր . որ զի
'ի նոսա որպէս 'ի սերմն փոքրիկ նկա-
րեալ կան կեանք ձեր . շառաւելք են
դոքա ձեր . և եկեսցեն աւուրք զի 'ի
դոսա զաւանդ կենացդ հաւատասջիք :
Եւ մանաւանդ , եթէ ներեացի ինձ ա-
սել , սորա ինքնին են կեանք ձեր . քան
զի զմեզ անցեալն իցէ , կամ առաջիկայն
որ խուսափէ . յապագայն դիմէ ամե-
նայն . և որ ինչ ճիգն ծախի և վա-
տակ՝ վասն ապագային է , և ներկայիս
իսկ հրճուանք 'ի նա բերին . ակնկա-
լեաց այսքան է զօրութիւն :

Ո՛հ , արդարեւ զհանդերձեալ կենօքդ
ապախտ արարեալ 'ի վտանգ ապակա-
նութեան զնէիք զայն , եթէ ոչ յայց
և 'ի քնին ելեալ մանրախուզիւ զիւր-
նամս արգաւանդութեանն 'ի փորձ մա-
տուցանէիք , եթէ չեւանէիք 'ի զնին
երկրին , որ խլրտի զձեօք , Թէ խաբեպա-
տիր արդեօք արձակիցէ շառաւիղս՝ եթէ
պտղաւէտս հանգոյն մարցն : Եւ զայս
իսկ զխոհական և զաշալուրջ խնամս
արթնութեան նկատեմեա այսօր 'ի քա-
ջալերականդ ձեր յայդ տիպ զուգա-
կցեալ : Եւ զի սերկեան հանդիսիւ հար-
ցաքննութեան մանկտուոյս ջանացայ ան-
կեղծ և անպատրուակ որ ինչ էինն ցու-
ցանել , հարկ է արդ և զհանդերձելոյ
առաջնորդութեանս իմոյ զոճ և զպայ-
ման զնել առաջի խորագնին տեսու-
թեան իմաստազարդ կաճառոյդ , որով
և զապագայից մանկտուոյս առջիք դա-

տել գուշակօրէն : Վանգի ծանր և դժ-
ժուարին դաստիարակութեանն է գործ,
և եթէ ոչ քաջացելոցդ 'ի նոյն արդարա-
կարով դատաստան սատարեսցէ 'ի խրա-
խուսանս նուազելոյս 'ի փորձոյ, գուցէ
զարտուղեալ յետնեցայց 'ի դժուարին
ասպարիզիս : Այլ զեղծայց ինչ ձերովդ
առատամիտ ունկնդրութեամբ . սակայն
և մի տարադէպս ինչ ընդվայրաբանել
թուեցայց՝ եթէ ըստ պահանջել և եթ
պաշտամանս ելեալ կամ յատեան գրա-
ւել վայրիկ մի զմիտս ձեր :

Իմաստասէր ոմն և քաղաքագէտ ոչ
աննշան մերոյ դարուս՝ երբեմն խորա-
զնին տեսութեամբն զկայ առեալ շուրջ
պարագիտելով զընթացս և զկարգ ուս-
մանց վարժարանացն և դպրոցաց համո-
րէն Արոպիոյ, և խորհրդազգեսաց ե-
ղեալ յանձին, դառնայր ապա առ դասս
ուսուցչացն և ծանր և մեծավայելուչ իմն
զայս հակիրճ պատգամ 'ի լեւիս նոցա
ազգէր . “ Այլ որ զբազումս շտեմարա-
նեաց 'ի մաի կամ որ զբազումս գիտի-
ցէ՝ նա կոչեսցի պատանի ուսեալ, այլ
որ անձամբ անձինն բաւական իցէ
զյոյլովն իմանալ և գիտել՝ ” : —
Սղազոյն զայս բան որպէս օրէնս ա-
ւանդեալ առ նոսա, և զպարտս պաշտա-
ման իւրեանց ճշգրիտ յիշեցուցանէր .
և կարևոր իսկ դատէր կանխազեկոյց
ազգ առնել նոցա . քանզի դէմ եղեալ
ուղեորէին, և անվարձ էր ուղին, ըստ
ասացելումն . քանզի ոչ ըստ երկարա-
գոյն և ոգեսպառ վաստակոցն զարգա-
սիան ժողովէին, բայց ուր 'ի բնէ ինք-
նաբոյս պտղաբեր էր երկիրն : Այս այս
ոչ յուսուցչացն թերակատար գիտու-
թենէ, զոր թերեւս և ըստ չափն իսկ
անցեալ գտանէր, մանաւանդ 'ի մե-
րումս ժամանակի, և ոչ 'ի թերու-
թենէ աշակերտելոցն համբակաց՝ իբր
եթէ բնութեանն ազահեալ իցէ նոցա
զհանձար, զի ուր յայնժամ չահ մշա-
կութեանն . և ոչ դարձեալ 'ի թերա-

հոգ փութոյ և խնամոց առաջնոցն և
կամ ջանից վերջնոցն . այլ զի տգէտ
էին՝ որք 'ի գլուխ մանկանցն անցեալ
զվարժապետականն բերէին զանձամբ
զձե, տգէտք էին, ասեմ, ամենեւին
եթէ զինչ գործ յանձն իցէ նոցա : Այդ
պիտեացդ ահա զօրէնս և զոգի պաշտա-
ման նոցա 'ի մի բան բովանդակեալ ու-
սուցանէր այրն իմաստուն :

Այլ մի թեթև և դուզնաքեայ բանքս
թուիցին և կամ վարկպարագի ասա-
ցեալ, իբրու զի այնու կարճ 'ի կարճոյ
օրինօք՝ զընդարձակ և զլայնածաւալ
արհեստին զասպարէս, զոր երկայնա-
պատում ճառք և բազմաթերթ մա-
տենք ամփոփել ոչ բաւէին, յանձուկ
սահման թզաչափ բանից կծկեալ ամ-
փոփիցէ . և անկարօտ իմն զմանուկն
դնելով առաջնորդութեան, սակաւիկ
միւս ևս և զվարժարանն իսկ փակել
հրամայիցէ . կամ զվարկ ուսմանց ա-
պախտ արարեալ՝ և զվարժապետու-
թեանն արուեստ փանաքի, չնչին, ում
պէտ և արհամարհ ցուցանիցէ : Այնու
զի եթէ մանկանն գործ է, ասեն, ան-
ձամբ անձինն առաջնորդել, զինչ այլ
մնայ ապա ուսուցչին գործել . — Վա-
զում ինչ . և առաւելագոյն իսկ պարտք
'ի նմանէ պահանջին և առաւելագոյն
վաստակք, որչափ թերեւս և յերազել
իսկ ոչ գիտիցեն :

Սի եթէ քաջ ոք միտ դնիցէ բանից
իմաստասիրին մեծի, խելամուտ բար-
ձրութեանն գտանիցի, և 'ի բարձունսն
անդ տեսանիցէ եթէ որպէս դաստիա-
րակութեամբ գիտութիւնք 'ի բնիկն
իւրեանց վերաբերին 'ի կատարումն
վսեմութեան, և փոխադարձ՝ գիտու-
թեամբքն դաստիարակութիւն : Վան-
գի զինչ իմանալ իցէ թէ “ Աս է մա-
նուկ ուսեալ, որ անձամբ անձինն բա-
ւական իցէ ուսանել, բայց զի չնոր-
հել մանկանն ընդ անձուկ գերանօք
վարժոցին ազատաթև թռիչս հօլա-
թեալ բերելոյ ընդ բնաւ ծագս
սահմանաց իմաստութեան . աւանդել
պատանւոյն զսրբազան փականս անմա-
տոյց և խորհրդական տաճարին գիտու-

Թեանց : Եւ զի՞նչ քան զայդ ծանր և դժնդակ պաշտօն :

Եւս իսկ ահաւասիկ ունի լինել շաւիղ ամենայն ուղղամիտ ուսուցչաց , որով ծանիցեն միանգամ զի՞նչ ուսումնն իցէ , կամ թէ մանաւանդ յոր գործ կուէցեալն իցեն : Եւս իսկ եղեն և մեր ջանք 'ի ճանապարհին յոր ընթացաք , զոր նախադուռն ճանապարհին մանաւանդ արժան է անուանել . քանզի մերս այս փորձ իմն էր դեռ ևս և ճաշակ ծանրութեանն , յոր զուս մեր մատուցեալ ստանձնեցաք 'ի հարկէ հրամանացն ստիպեալք :

Եւ զի անստերիւր և անսայթաք են շաւիղք ընթացիցս , մարթ է ապաքէն և 'ի մեծէ անտի վախճանէ գործոյն իմաստասիրել . այլ անդստին 'ի սկըզբանէ ճառիս իմաստնոյն բանիւք հաստատել կամեցաք , զի մի ինքնօրէն ձեռն երիցու թեամբ նոր իմն թուիցիմք բանալ ճանապարհ մեզ և այլոց ամենայն վարժապետաց . թող զի և 'ի ձէնջ , հարք իմ մեծարոյք և պատուականք , և 'ի ձէնջ իսկ ունիմ ինձ վկայս , զուսուցիչս իմ , որ իւրեանց վարդապետութեամբն ծնան զիս և սնուցին , յորոց ոմանք աստ յատենիս թիկունք են և հաստատութիւն բանիցս , և այլք 'ի հեռաւոր ամիսն : Ասկայն եթէ տակաւին հաճոյ ումեք թուեսցի զընտրութիւն իրացն 'ի թուոյ անտի համարոյ արտաքնոցն առնուլ և ամբօխին բազմութեան զհետ երթալ , և ոչ վարկաբարազի խորհրդով ընդունել ինչ կամ մերժել և զրահետ վարել , սակս այնպիսեացն հարկ է ինձ խուսն մի զճառ բանիցս երկայնել և ջանալ սկզբամբ և պատճառօք ցուցանել զիրացն զճմարտութիւն՝ թէ կարիցեմք . ապա թէ ոչ՝ զպարտութիւն խոստովանեալ դադար առնուլ յանօգուտ ջանից : Եւրդ զի վէճ է մեր ընդ հակառակորդս , առաջարկեալս մեր բան 'ի ջատագովութիւն իսկ շրջեսցի : Եւ ջատագով կացից ոչ իմոցս կարծեաց , այլ իմաստնոյն , և որոց յառաջ քան զիս կացին աստ յայս պաշտօն և իւրեանց հանձն

րեղ և իմաստասէր խոհական մտօքն 'ի փառս զայն ամբարձին :

Եւ զարմանք մեծ ունին զիս աստանօր , զի հակառակորդս խնդրեալ թուիմ գտանել և ոչ զոր . զի 'ի լուր բանիցս ասացելոց միաբարբառ եղեալ ամենեցուն՝ գոչեն յերեսս ընդդէմ : Եւ զի՞նչ նոր և անսովոր իցեն բանքդ , և ո՞այն՝ որ չգիտիցէ եթէ պարտ և արժան է ընծայել մանկտուոյն զիսկանս գիտութեանց տաճարին . ոչ և իմաստնոց ամենեցուն նոյն կարծիք են և նոյն օրէնք վարժարանաց ընդհանուր : Եւ եթէ նոքա ոչ խոստովանիցին զանձինս հակառակամարտս գող , արդիւնք իրացն վկայեսցեն և նշաւակեցեն զիստիր զանազանութեանն որ ընդ մեզ և ընդ նոսա , յորժամ սկսցուք գամ մի պարզել առաջի զգլուխս զանազանութեն , որով ևս քան զևս լուսաբանեալ առնուցու հաստատութիւն առաջարկս մեր :

Տեսեալ ուրումն եթէ վայրապար է , մանաւանդ թէ և փասաբեր առաւելազանց ճիգն և ջան՝ եթէ բնութեանն ձիւք ոչ սատարիցեն , զգաստիարակութեան իսկ պէտան որ 'ի սկզբնաբոյս հասակին՝ 'ի բայ մերժեաց ամենեկին . և ազատս կամեցաւ թողուլ զերկոտասան և զերեքտասան ամս տհաս հասակին , իբրեւ զի չիք 'ի նոսա կորով մտաց բաւական 'ի մտառութիւն ասացելոցն . երկրորդեւ երկրորդեն զասացեալսն թութակաբար , բայց չիմանան զոր ասենն . և վարժապետացն ընդունայն վատնին վաստակք , զի ոչ ժամանեն յոր ակն եղեալն են . և ամենայն դաստիարակութիւն նոցա ոչ յայլ ինչ յանկի , բայց 'ի սովորոյթ իմն կարգի և գործոց , որոց չիցէ բնաւ ուշ նպատակի :

Եւ արդարեւ լսի իսկ ստէպ թէ Եւս ոմն այր հանձարեղ է . և զարմանք , զի 'ի մանկութենէ ուսեալ նորա բնաւ չիք : Եւ այսպիսիք այնչափ յաճախաւոր ընծայեն օրինակս , մինչև Առսոյի , որ առաջնորդն եկաց այդմ կողման , 'ի թիւ համարոյ նոյն հայեցեալ համար ձակեցաւ և ևս , և իստացաւ 'ի կարծիս իւր . մանաւանդ զի և 'ի հակառա-

կէն ոչ մեծ ինչ օգուտ տեսանէր լեալ
այրն նրբամիտ և կորովատես : Ետես
զի անկապ է 'ի բնէ հանձար , ինքնար-
շաւ , անկարօտ առաջնորդի . որ ինքնին
իւրովի նկատէ զհեռաւորսն , սահմանէ
իւր կէտ նպատակի , և ինքն իւր հոր-
դէ ծանապարհ : Տեսանէք , ասէ , կոյտս
իմն մեռելատիպ և անկենդան սառնա-
մանեաց ձեանց ժայռից ապառաժից
պաղէալ ձուլեալ անշարժելի , և 'ի նո-
սա ոգի իմն շարժուն որ արագ արագ
արշաւէ . և ահա սա ինքն է Հանձարն :
Ինքն է միայն միայնակ , և ո՞ ժողովի
զհետս ընթացից . նորա գտանել , կամ
կոխել իսկ բնաւ զոտնատեղիսն նորա :
Եւ յառաջ զբանս իւր մատուցեալ խը-
րոխտանօք հարցանէ իմն Վենուային .
() Ինչ այնմ ունիցի օժանդակել դաս-
տիարակութիւն . եթէ է որ այնպի-
սումն առաջնորդ , զնոյն ինքն զհան-
ձարն է ասել . իսկ եթէ գուցէ դաս-
տիարակութիւն բաւական առ այդ ,
հարկ իցէ ապա ասել թէ անգիւտ դեռ
ևս է դաստիարակութիւնն այն , և կամ
թէ զհանձար իսկ այնպիսի ոչ առ հան-
ձար գրել : Եւ ինքն ամենևին իսկ
մտացածին զգաստիարակութիւնն հա-
մարեցաւ , և բնաւորական գոռոզ սոն-
քանօքն և յոխորտանօք ոտս արձակեալ
եհար զայն , տապալեաց , քանդեաց ,
ձիւեաց , և ել բազմեցաւ 'ի վերայ ա-
ւերակաց նորա : Վղղղեցաւ երկիրն
առհասարակ յահագին կործանմանէն .
քստմնեցան և զդողանի հարան որք 'ի
զնին կային : ... Եւ մեզ չիք երկիւղ-
պակուցելոցն յայնժամ ' յեղակարծ էր
գործն . իսկ մեզ զի դար մի ողջոյն ան-
ջըրպետ ընդ մէջ կայ՝ անզօր և ապի-
կար երեւի և գործն և գործելին , որ
զտղայութեան գող բերէ կերպարանս :
Եւ են են մեր և այլ խումբ հակա-
ռակամարտից , և այժմ իսկ առ մեօք՝
յաճախաւորք բազմութեամբ , որոց
ծայրայեղ խոտորմամբ 'ի հակառակէն
միաբարբառ եղեալ աղաղակեն . Չիք
և չիք այլ ժամ բարեպատեհ 'ի դաս-
տիարակութիւն՝ քան զհասակն ման-
կութեան . եթէ մարդ որ այր կամիցի

լինել , եթէ մայրս երկնագագաթս ամ-
բառնալ կամիցի , անդստին 'ի փոքրիկ
սերմանցն պարտի սկսանել և հողոյ ա-
ւանդել զայնոսիկ : () այս ասեն , և այն
ինչ որ պատանի ոտն արտաքս քան ըզ-
դուրս վարժարանին դնիցէ , ակնարկի
առնեն , յառաջ կոչեն զմիմեանս . () ն
եկայք , 'ի քնին զդա մատուցուք և ըզ-
չափ աուցուք մեծութեան դորա թէ
որքանոյ իցէ . տեսցուք եթէ հաւասա-
րեսցի գիտութեանս մերոյ : — Եւ , նե-
րեցէք ինձ աստանօր ասել , զի թէ և
տղա ժամանակակիցք մեզ իցեն , և
արք երեւցին , սակայն և սոցա բազ-
մութիւնն համօրէն մանուկ են մտօք :

Իսկ ընդէր , գոչէ աստ դաս մի մարդ-
կան . ոչ ապաքէն առաջնոցն անտեղի
կարծեաց ընդդէմ զինելով երկրորդի
դասուս՝ ըստ հասարակաց մտաց վկայու-
թեան ցուցանեն զի չէ և չէ պարտ
ժխտել մանկանցն զուսումն և զգաս-
տիարակութիւն . ապա որովք իրաւամբք
իցէ քեզ խորշիլ մերժիլ և 'ի նոցանէ ,
և մանկունս առձայնել և զնոսա : — Եւ
վկայեն եթէ ինքեանք ուրեմն նոցին
համամիտք և համախորհուրդք՝ զման-
կութեան տիս և զսկզբնաբոյս հասակն
և եթէ սահմանեն ժամ և ժամանակ
դաստիարակութեան , երկուցեալք զի
մի յերկարաձգելն զայն և 'ի տալ ժա-
մանակ ըստ զարգանալ հասակին 'ի կա-
տարումն ածելոյ զթերին դաստիարա-
կութեան , յառաջնոցն խոտորեացին 'ի
կարծիս : Եւ ահա սկսանի տակաւ 'ի
յայտ գալ խտիրն որ ընդ մեզ և ընդ
նոսա , յորմէ յուրաստն կային : Եւ
յառաջ ևս մատիցուք :

Եւ քաբէն երկուցուն դիմամարտ կող-
մանցն անլծորդելի հակառակութիւն
յեղծումն իրերաց՝ մեծ իսկ հաւաստիք
են ստուգութեան երրորդի մերումն
կարծեաց . մանաւանդ զի առաջնոցն
ներհակախօհ կարծիք 'ի թերութեանց
երկրորդին առին սրտաճառս . և թէ-
պէտ անտեղի և նոցա կարծիք , այլ ոչ
'ի սպառ անիրաւ և յանհանձար մտաց
ծնունդ : Եւ այս 'ի Շ դաէլայ իսկ բա-
նիցն է վկայեալ , որ զՎուսոյի կար-

ծեացն խօսելով՝ ասէ . « Լազու՛մ այն է , զի որ առ ՚ի դարմանն չարեաց ինչ մատուցանին հնարք , նա և քան զխառն չարագոյն է , » : Որով արդար համարեալ զտեսութիւնս մտաց առնն , և զհետեւութիւնն ստգտանէ :

Իսկ արդ՝ որ ՚ի ստոյգ հնարս դարմանոյ չարեացն յետ նորա մատիցէ , ապաքէն խորշել ունի ՚ի Սուտոյի կարծեացն , բայց և երկրորդին ոչ հաւանել : Եւ մեզ արդ միանգամայն առաջիկայ և ընդ երկոցուն իսկ մաքառել . սակայն և այնպէս և երկոցուն իսկ կարծեացն եմք համախոհք : Երբ երկպառակ կարծեօք՝ մին զդաստիարակութիւնն ՚ի մանկութեանն սահմանեալ , և միւսն յետ մանկական հասակին , չափ և ժամանակ այնմ որոշեցին . ըստ փոփոխել ժամանակին՝ զանազանէր և գործն , և ՚ի գործոյն ուշ նպատակին : Որոց թէ երկաքանչիւր վարդապետութեանցն քաջ ոք խելամուտ լիցի , բանն ինքնին առաջնորդեալ ցուցանիցէ նմա զուղղորդն և զճշմարիտ : Բանզի եթէ անաչառատես և ուղիղ մտօք հայիցի և յերկոսին , յերկոսեանն իսկ տեսանէ ծայրայեղ խոտորումն . և ՚ի խոտորմանէ աստի թիւր սկզբանց ծնունդ : Եւ ապաքէն ոչ այնչափ հագացան մարդիկ օգտել՝ ՚ի մի միաբանութիւն ժողովելով զտարաձայն կարծիս , որչափ գործեցին փնասս՝ արհամարհեալ իսպառ զբանս ընդդիմակողմանն առաւելազանց վստահութեամբ յիւրեանցն : Եւ զինչ մեզ յետ այսր առականոր բանիս մնայ առնել :

Որ երբեմն վասն իմաստասիրականին ոք ամբաւ պառակտմանց մտախոհ լեալ՝ նոր իմն գտանէր ճանապարհ , ինձ իսկ աստէն ՚ի դէպ դայ զնոյն նորա բանսն երկրորդելով՝ ՚ի մերսն մխիլ , և ցուցանել թէ իւ և յորում զանազանիցիմք մեք յերկոցուն ևս կողմանց : « Եւ մենայն վարդապետութիւն վրիպական , ասէ՝ , բազում այն է զի թերակատար է . զթերակատարսն ՚ի մի լծորդելով , մարթ

է զկատարեալն գտանել զիմաստասիրութիւնն , » : Այսպէ իսկ այսմ այրն հանձարեղ և պարզախօս Տէժերանտոյ եթէ « Ընթ վէճ՝ , որոյ և երկաքանչիւր կողման չիցեն ինչ իրաւունք . ճշմարտութիւն մի է ՚ի նոսա , այլ ձախողակի բաժանեալ , զորոյ զմէն մի մասն ունին կողմանքն դիմամարտք՝ ոչ կամեւով միաբանել յիւրեանս , » :

Եւ արգարե ոչ է առաջարկութիւնս մեր՝ արտաքոյ կրկին ծայրայեղ մոլորութեանցն , զորոց ասացաք , նոր իմն ցուցանել ճանապարհ . այլ թուեցեղոցն մերոց հակառակորդաց զանմիաբան կարծիս ՚ի հաւանութիւն ընդ միմեանս ածեալ , և զոր նորա մասնաբար առնուն և տրոհելով՝ մեր ՚ի մի խառնեալ , ասեմք՝ եթէ « Դաստիարակութեան մի գործ է , և ժամանակ նորա մի , այն իսկ է կեանք մարդոյ ողջոյն . յօրէ անտի՝ յորմէ զակն ՚ի լոյս բանայցէ , հիմն արկանի գործոյն , զարգանայ ընդ կեանսն , և մահուամբն կնքի : Ասեմական է գործն , զի և վախճան նորա վսեմական . զինչ իցէ աղէ կէտ նպատակի նորա և դիտումն : — Դաստիարակութե՛ գործ է առնուլ զմարդն և որպէս էրն ՚ի սկզբանէ ՚ի յաւիտենից առաջի մտաց աստուածութե՛ն նախանկատեալ , զոր եղծ և ապականեաց անձամբ մարդն , վերստին ՚ի նոյն վերանորոգեալ դարձուցանել ՚ի բնիկն իւր գեղ . այն իսկ է՝ ՚ի մարդ կատարեալ , ՚ի բուն մարդ , ՚ի նախատիպն յայն պատկեր՝ ՚ի ճոխացեալն ամենազգի ճրիւք հոգեկանօք և մարմնականօք , և հրաշազարդ ածել զնա ՚ի հանդէս : « Բանզի և մարդոյ ՚ի վերայ երկրի ճակատագիր ոչ այն է՝ բարօրութեան լինել հետամուտ , այլ ՚ի լրումն դիմել կատարելութեան , » , ասաց ոմն ՚ի մատենագրաց : « Զորոյ ՚ի դիտակցութեան հաստատեալ կայ և բարօրութիւն , » , յաւել Լնսիլլեոն :

Եւ այսմ դաստիարակութեան գործ է գերագոյն քան զարարածականն բնութիւն վերամբառնալ զմարդն . դաս

տիարակութեան գործ է զօդ և շաղկապ կալ ընդ մարդս և ընդ մարդն աստուածաստեղծ . դաստիարակութեան գործ է կամուրջ գործել ընդ ժամանակս և ընդ յաւիտեանսն : Բարեւ չըքնաղ կապոյն , որ զաստիս ընդ հանդերձելուն կցորդէ , զմահականացուն ընդ անմահութեան . ապա յաւիտեանականութիւն այժմէն իսկ սկզբնաւորեալ է մեզ , և ժամանակս յաւիտեանական : Բրայէս և Բնսիյեոն ճշգրտաբանէ ասելով . “ Բակ անմահ է մարդ , որ ըսկիզբն դաստիարակութեանն արարեալ և ՚ի կատարումն զայն ածցէ . յուշիկ ընթանայ , այլ հասցէ ՚ի նպատակ անդր , զի սպառուած նորա յաւիտեանականութիւնն է ” :

Բրդ զի ընդ կեանս ողջոյն ձգի դաստիարակութիւն , ոչ կայք են նորա և ոչ դադարք , այլ անդուլ արշաւանք . զի և յասպարէզ ընթացից կենաց մարդոյ որ այն իցէ ծիր և սահման , եթէ կատարելութեանն՝ յոր դէմ եղեալն է՝ անծայր և անեզր են սահմանքն : Բնեայն ամբ կենաց մերոց անցելոցն հետամուտ , կարապետ են այնոցիկ՝ որոց զհետն գան . և այսպէս ՚ի կարգ անկեալ ձգի միահետ մինչև ցլախճան . ամենայն հասակի են գործք և ջանք սեպհականք , և այլք դարձեալ՝ որոց զհետն յաջորդեն . և ըստ աճել ամացն , տակաւ յաճախեն օգտիցն շահք . և մօտ ՚ի վախճանն հասեալ , և ճիգնն և ակնկալութիւն առաւելուն և ևս : Բստ այսմ է իմանալ և զդաստիարակութենէ . զի և ՚ի նմա նոյն ջան և ճիգն՝ առաւելուն հանդերձ հարկ է թէ իցեն : Եթէ բնութիւնն կայ մեզ յամենայնի ուսուցիչ և վարդապետ , աղէ ՚ի նմանէ իսկ ուսցուք եթէ իրպէս յամի և մեղմով պարտ է փութալ ՚ի գործ ինչ թէ և չափաւոր : () ի և ոչ յանկարծակի ՚ի քթթել ական ՚ի յարդ և ՚ի կերպարանս գայ մարդ . այլ տակաւ սնանելով և աճմամբ : Եւ եթէ ըստ մեծութեան վախճանին իցեն և հանդերձանք պատրաստութեան , զինչ գործ մեծագոյն քան զդաստիարակութիւն . ապա ըստ

վսեմագոյն իւրոյ վախճանի՝ և մեծագունից ունի պէտս հանդերձանաց : Եթէ զգալի ձևակերպութեան մարդոյս մի միայն եղան հանդերձանք , մեծ ինչ իցէ եթէ մեք հոգեկանին և ողջոյն իսկ մարդոյն աստուածակերպ կատարմանն բազմապատիկ թուեսցուք հանդերձանս : Բայ , հանդերձելոյ վեհ և վրսեմակնկալութեանցն ՚ի պատրաստութիւն ոչ մի , այլ զերիս եդ պայմանս բնութիւնն ՚ի կատարումն դաստիարակութեան . զերիս , որք և զմիմեանց կալեալ ունին , և զմիմեանց յաւելուն զօրութիւն : Եւ եթէ այդ այնոցիկ իցեն՝ ժամ է արդ զնոսին քննելոյ :

Բնդստին յօրէ անտի ծննդեանն ըսկիզբն լինի գործոյ դաստիարակութեանն , անտի և առաջնոյ մասին դաստիարակութեան սկիզբն . և այս է առտնին կամ մայրենին անուանեալ դաստիարակութիւն : Եւ որ զնա յաջորդէն , այն իսկ է անուանեալն ՚ի հաւաակորդաց մերոց դաստիարակութիւն . զի զայն միջոց ժամանակի համարին առանձին իմն ժամանակ դաստիարակութեան , յորմէ միայնոյ կախեալ կայցէ բովանդակ ապագայն մարդոյ . և է սա հայրենին կամ որ ՚ի ձեռանէ խնամակալուի ուրուք օտարոտոյ կատարի դաստիարակութիւն , միջինն ՚ի մէջ մականուանեալ , որ զառաջինն կցորդէ ընդ վերջնոյն կամ ընդ երրորդին . և վերջինս այս կատարումն է բովանդակ դաստիարակութեն կամ բուն իսկ դաստիարակութիւն . զի և այն իսկ է սեփհական ժամանակ դաստիարակութեան՝ ՚ի կատարելութիւն անդր թեւակոխելոյ , յորում ժառանգն որ ցայն ժամ ընդ խնամակալքն կայր , զտղայութեանն ՚ի բաց ընկեցեալ տէր և իշխան կայ անձին և խորհրդոց , և զմանկածու , զխնամակալ և զդաստիարակ ՚ի բաց թողեալ և զգարոցական հրահանգան , բնիկ հանձարովն և առաջնորդութեամբ բանին հրահանգելոյ ուղղութեան օրինօք և առաքինական սկզբամբք՝ սկսանի ինքնարշաւ ընթանալ ազատօրէն ՚ի կէտ ասպարի-

զին, յոր դէմ եգեալն է . 'ի կատարումն առեմ մեծի դաստիարակութեան գործոյ :

Եւ մի ընդ այն որ զարմասցի զի ազատ զդաստիարակութեանն համարիմք գործ : Օյ թէ դաստիարակութիւն ողջոյն իսկ զկեանս մարդոյ ասացաք, քանզի ազատ և ինքնիշխան հաստեցաւ մարդ 'ի կեանսն իւրում յարարչա գործ ձեռանէն, հարկ է ապա և դաստիարակութեանն ազատ գոլ և անբռնադատ . այնպէս զի իցէ մարդ անձամբ անձինն և դաստիարակ և դաստիարակեալ, ուսուցիչ և ուսեալ . որով և տիրապէսն դաստիարակութիւն ազատ է, և ոչ որ ժտիցի իշխան կալ 'ի վերայ նորա :

Երտանօր ոգեբերեալ իմն Ոսկոյ՝ գլուխ 'ի վեր ամբառնայ անդուստ գոչելով . Եւս դուք ձեզէն արդ ներհակախօս բանիւք իրաւունս տայք իմոցս . զի ուր իցէ ազատ դաստիարակութիւն, երբ 'ի ինամս օտարին յանձն առնէք զտղայն . և իբր օրէն իցէ այդ, եթէ ազատ հաստեցաւ մարդն : — Եւս ահա ոչ և կեանք մարմնոյն ինքնուրոյն և սեփհական մանկանն են . և զխորդ մինչև ծնեալ՝ զկենաց մօրն կախին աւուրք նորա . ոչ բնութիւնն իսկ ուսուցանէ մեզ զայդ : Եւս և զթուղնեկին նորաբոյս թեւ ուղղէ նախ մայրն, մարդէ և հրահանգէ, և ապա թողու արձակէ զնա խոյանալ ազատաբար 'ի բարձունս 'ի վեր և ստոր 'ի խոնարհ, վերամբառնալ 'ի գագաթս լերանց և վայրաբերիլ 'ի խոխոմն խորածորս . զայսօրինակ և մանկան տըղայոյ մինչև ցարբունսն՝ բանին և հանձարոյն թեք ուղղեալք և կրթեալք նախկին և միջին դաստիարակութեան հրահանգօք, և ապա խոյասցի ինքնօրէն ազատաբար ընդ լայնածաւալ ասպարէզ տիրապէս դաստիարակութեան՝ անձամբ զանձն դաստիարակելով : —

Եւս դարձցուք մեք 'ի կարգ բանիցս : Եթէ դաստիարակութեան գործ մի է, և ընդ կեանս ողջոյն՝ որպէս ասացաքն՝ ձգիցի, և զի բնութիւնն յերիս

տրոհեաց զայն՝ երեցուն ևս 'ի մի և 'ի նոյն բերելով վախճան, 'ի յառաջագէմ կատարելութիւն մարդոյ, զինչ ապա միոյ միոյ 'ի նոցանէ գործ իցէ և պաշտօն : Եւս ո՞ այն որ երկբայեացի բնաւ զի սոցա երեցուն զմիմեանց կալեալ և միմեանց հորդիցեն ճանապարհ 'ի կատարումն դաստիարակութեան : Ոչ ապաքէն զսոյն և հզօրագոյն որ յոյժ քան զիս երբեմն յայս բեմ արձանացեալ՝ ցուցանէր ազգոյ բանիւք կարկելով զէզուս, որոց զմայրենի դաստիարակութեամբն անգոսնեալ ապախտ առնիցեն : Եւս զի որպէս նախկինն այն մայրենին դաստիարակութիւն երկրորդումն հորդէ ճանապարհ, նոյնպէս և երկրորդն որ 'ի միջոցին՝ նախաշաւիղ իմն է բնիկ դաստիարակութեանն, զորմնայ մեզ արդ բացայայտել :

Եւս 'ի քաջ խելամուտութիւն իրացս հարկ է մեզ աստանօր՝ այլուր զկարգ բանիցս փոխել . և ոչ զկարգ բանիցս և եթ, այլ և զձեզ իսկ, ո՞ իմաստնախումբ յողով, զձեզ իսկ առեալ փոխաբերել 'ի սեամս արարչագործութեն մեծի, և ընդ ձեզ յաշխարհարարութիւն անդր աստուածային պիշ յառեալ նկատել : Եւս ահաւասիկ ասպարէզ ամբաւ, յորում հրաշալիք ամենազգիք փայլեն՝ ամենակարող ձեռին նորա և անհաս զօրութեանն վկայք և քարոզք . անդ ընդ յառաջել կերտուածոյն՝ և ստեղծիչն գոգցես յաւելեալ զօրութենէ 'ի զօրութի գամ քան զգամ 'ի կատար հրաշալեացն թեւակոխէ . և հուսկ ուրեմն քայ հասանէ 'ի սքանչելեացն ծայր 'ի ստեղծագործութիւն իւրոյ պատկերին նմանութեան . և ահա մարդն հրաշակերտ, յոր խոնջեալ իմն ստեղծիչն՝ 'ի հանգիստ դիմէ յաստուածականն իւր գահոյս . և 'ի հանգըստեան անդ ակնարկեալ 'ի վերջին հրաշակերտ ձեռին իւրոյ՝ զարմացեալ սքանչանայ . զի զաստուածահրաշ կերպարանս իւր նկատէ 'ի նմա : Եւս, 'ի

1 Հ. Արրահամ վարդապետ Ճարեան . (Տեո Բաղմալէպ Հտ. Ժ, էջ 327) :

նա և մեր ուղղին բիբբ • 'ի մեզ ինքեանս լեալ ակնկառոյց՝ և սիրանամք • և համայնիցն գեր 'ի վերոյ տեսեալ զմեզ գոյից և աննման ամենեւին , ոչ ինչ անիրաւիմք արհամարհել առ մեօք զայլն ամենայն : — Այլ որ այն իցէ հրաշափառ ստեղծուածոյդ կնիք պանծանացն , որով գեր 'ի վերոյ բնաւիցն ամբարձեալ 'ի պատկեր նմանութեան յաւիտենականին՝ աստուածաձիր ներգործութեանց նորին իցէ վերբերող • — Բանն : Բանին բովանդակէ զամենայն , մինչև աստուածական կարողութեանցն լինել խելամուտ • բանիւ քանի բարձրութիւնս հարթեաց և ըզհարթս լեռնացոյց , և 'ի բարձրութենէ 'ի բարձրութիւն վերբերեալ ընդ քանի աստիճանս իմաստութեան արդ 'ի վայր ակնարկէ • և ինքն ինքեան անպարփակ՝ չառնու ուրեք զկայ :

Այլ սակայն մեծի այսորիկ աստուածակերպ զօրութեան բանին , ընդ որ հիանամքս այդչափ և սքանչանամք , որչափ տխեղծ և անկերպարան սկիզբն է • հայեցարուք , աղաչեմ , 'ի մանուկ դեռածին ոչ ինչ ընդհատ յանբանից • նա մանուանդ ապիկար ևս քան զնոսա • և իցէ այն արժանաւոր աստուածեղէն զմայլմանն , որով և արդ իսկ սքանչանայ ստեղծողն 'ի մէն մի ծնունդ մարդկան ուրախ լինելով : — Այլ կարի իսկ քաջ • զի շատ իսկ յաչս նորա մեծարգի էր բողբոջն այն և սերմն հրաշալի , յորում իբրև յանձուկ սահմանի համայնքն բովանդակին զօրութիւնք , և համբուն կատարելութեանցն զանձք :

Այս ահա և ձերդ իցէ գործ , դաստիարակք պատուականք և ծնողք , որ աստուածատիպ իմն օրինակաւ նորաստեղծութեան զանկերպարան հասակն 'ի մարդ կատարեալ • այո , այս իցէ և ձեր գործ , արկանել զսերմն փոքրիկ 'ի նլմա , որ ըստ աճել հասակին՝ առցէ և այն աճումն : Յայնժամ արգասաբեր լիցին վաստակք , և քիրտն հեղեալ ընդ երկիր՝ ոչ ընդ վայր կորիցէ կամ ցնդեցի :

Յայսվայք զկարգ բանիցս հասու

ցեալ և զդաստիարակութեանն պաշտօն սահմանեալ , ժամ է արդ վատանել զնա յուսմանէ , որոյ բաժանումնն թէ պէտ որպէս մարմին 'ի հոգւոյ յանհանրիցն է , այլ զի մեր բանքս աստ զուսմանէ և եթէն , զայն այնպէս դիցէ մեզ բանս : Արդ զորօրինակ դաստիարակին պարտք են աւանդել մանկանն զսկզբունսն , որովք կարասցէ ապա իւրովի դաստիարակ կալ անձին , զի այն իսկ է սերմն տիրաւանդ , և ջահն լուսատու՝ որով ընդ ամենայն խորշս իաւարչտինս գաղտնածածուկ գանձուց դաստիարակութեն մատչիցի , դոյնօրինակ և յուսման մասին անկ է վարժապետին ուսուցանել մանկանն եթէ որպէս պարտ իցէ ուսանել • և ահաւասիկ այս իսկ էր զոր 'ի սկզբուն անդ ճառիս ասացի բանիւ իմաստնոյն , եթէ “ Այլ որ զբազումս ամբարեալ իցէ 'ի մտի , այլ որ անձամբ անձինն բաւական իցէ զյողովսն իմանալ և գիտել , արժան է կոչել զնա պատանի ուսեալ ” :

Իսկ թէ որով օրինակաւ յաջողեաց մեզ այդ , աղաչեմ զներողամիտ ունկնդրութիւնդ վայրիկ մի ևս չնորհել ինձ • զի աստ իսկ է ճախճախուտն ընդ ծաղկազարդ դալարեօք ծածկեալ և գեղերեսեալ , որ 'ի պատրանս իւր հրապուրեաց զբազումս • և աստ իսկ յայտնեալ ծանուցի տիրապէս խտիրն այն մեծ և կարեւոր խտիր ընդ մերս և ընդ հակառակորդացն կարծիս , որ յարտաքինսդ առաւել ևս արտափայլեալ երևի • քան զի հարկ իսկ է 'ի փոխել վախճանին՝ և իսկութեան գործոյն փոփոխումն առնուլ :

Աւարտն յառաջիկայս :

